ՀՏԴ 159.99

Հոգեբանություն

Լեվոն ՍԱՐԳՍՅԱՆ, Լիլիթ ԼԱՉԻՆՅԱՆ, Արմեն ԱԲԳԱՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան,
E-mail: sargsyan1985L@rambler.ru, fil-hog@mail.ru, abgaryanarmen23@aspu.am

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածը վերաբերվում է իրավական հոգեբանության ամենակարևոր հարցին մեկի՝ դատապարտյալների հոգեբանական խնդիրների ուսումնասիրությանը: Վերլուծվում են տարբեր հեղինակների մոտեցումները: Հոդվածում նկարագրված են դատապարտյալին բնորոշ մի շարք խնդիրներ՝ հոգեբանական սթրես, վերակառուցում, հարմարում քրեակատարողական հիմնարկությունում, մեղքի զգացում, հարաբերություններում դժվարություններ և այլն: Ազատությունից զրկելու առանձնահատկություններից ելնելով՝ ներկայացվում են դատապարտյալների հոգեբանական վիճակի փոփոխությունները, ինչպես նաև այն դժվարությունները, խոչընդոտներն ու հակասությունները, որոնք առաջանում են այս ժամանակահատվածում:

Բանալի բառեր՝ *դատապարտյալ, հոգեբանական վիճակ, հանցանք, պատիժ, մեղքի գիտակցում, հարմարում, հուզական հակազդումներ, սոցիալ-հոգեբանական խնդիրներ:*

Л.Саргсян, Л.Лачинян, А.Абгарян

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОСУЖДЕННОГО

Статья относится к самому важному вопросу в юридической психологии: изучения психологических проблем заключенных. Анализируются подходы разных

авторав. В статье описана ряде задач характерно осужденного: психологический стресс, реконструкций, адаптация уголовно-исполнительного учреждения, чувство вины, трудности в отношениях, и т.д. Обусловлены особенностями лишения свободы представлены изменения психологического состояние осужденных а так же те трудности, препятствия и противоречия, которые встречаются в этом периоде.

Ключевые слова: *осужденный, психологические состояния, преступление, наказание, сознание греха, адаптация, эмоциональные реакции, социально-психологические проблемы.*

L.Sargsyan, L.Lachinyan, A.Abgaryan

SOCIAL PSYCHOLOGICAL PROBLEMS THE CONVICTED

The article refers to the most important question in legal psychology: study of psychological problems of prisoners. Analyzes the approaches of different authors. This article describes a number of problems characteristic of the convicted person: stress, reconstructions, adaptation penitentiary, guilt, difficulty in relationships, etc. Conditioned by the particularities of imprisonment are presented the changes of psychological mood for convicted persons, as well as the difficulties, the obstacles, the contradictions which they face during this period.

Key words: *condemned, psychological states, adaptation, the crime, punishment, consciousness of sin, emotional reactions, social psychological problems.*

Իրավաբանական հոգեբանության բնագավառի ուսումնասիրության կարևոր խնդիրներից է համարվում դատապարտյալի անձի ուսումնասիրությունը և համապատասխանաբար քրեակատարողական համակարգի հոգեբանության տեսամեթոդաբանական համակարգի ձևավորման հարցերը: Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել իրավաբանական հոգեբանության, մասնավորապես՝ քրեակատարողական համակարգի հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացում: Քրեակատարողական համակարգի վերջին շրջանի հոգեբանական

ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են դատապարտյալների վերահարմարման գործընթացին [14]: Այս բնագավառի որոշ ուսումնասիրություններ փորձում են ձևավորել քրեակատարողական համակարգի հոգեբանության ուսումնասիրության հիմնական խնդիրները, դատապարտյալի անձի ուսումնասիրությունը, քրեակատարողական հիմնարկում հոգեբանական աշխատանքի համակարգը [6]: Մասնավորապես խոսքը վերաբերվում է քրեակատարողական համակարգի հոգեբանության բնագավառում հոգեբանական հետազոտությունների, տեսությունների, հայեցակարգերի համակարգմանը: Քրեակատարողական համակարգին վերաբերվող հոգեբանական հետազոտություններում կարելի է հանդիպել նաև դատապարտյալի անձին վերաբերող որոշ հետազոտությունների, որոնք մասնակի անդրադարձ են կատարում դատապարտյալների հոգեբանական խնդիրներին և չեն ամբողջացնում առկա խնդիրները որպես մեկ ընդհանուր համակարգ:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրներին անդրադառնալիս հարկ է նշել վերածննդի դարաշրջանում հանցավորության հիմնախնդրի ուսումնասիրություններում հատուկ ուշադրության արժանի անգլիացի մտածող Թ. Մորի [10] ուսումնասիրությունները: Հեղինակն իր «Ուտոպիա» աշխատության մեջ խոսում է հանցագործության նախազգուշացման մասին, ըստ որի՝ երբ հանցագործության պատճառներն անփոփոխ են լինում, անփոփոխ են նաև դրանց հետևանքները: Մորը կարծում է, որ մահապատժի փոխարեն պետք է նշանակել ուղղիչ բնույթի աշխատանքներ, ինչը ժամանակի համար պատժի նոր ձև էր հանդիսանում:

18-րդ դարից սկսած հանցավորության վերաբերյալ փիլիսոփայական միտքն առանձնացավ նախկինում տիրող թեոլոգիական տրակտատներից: Լայն տարածում գտան հանցագործության և պատժի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները, որոնցից առանձնահատուկ ուշադրության են արժանի Չ. Բեկկարիայի [5], Չ. Լամբրոզոյի [11], Ս. Պոզնիշևի [13] աշխատությունները:

Իտալացի հոգեբույժ Չեզարե Լամբրոզոն հանցագործությունը դիտարկում է որպես բնական երևույթ՝ նշելով, որ հանցավորությունը գոյություն ունի մարդկության հետ միասին՝ մարդկության ծագմանը զուգահեռ և շարունակվում է մինչ օրս: Նա զարգացրեց հանցավորության կենսաբանական հիմքի գաղափարը՝ առաջադրելով «բնածին հանցագործ» հասկացությունը: Լամբրոզոն համարում է, որ բնածին հանցագործին հնարավոր չէ ուղղել, քանի որ այս դեպքում հանցավոր վարքն ունի կենսաբանական հիմք [11]: Այս գաղափարը բավական մեծ ազդեցություն

ունեցավ հանցավորության խնդրի հետագա ուսումնասիրությունների համար:

18-րդ դարի ականավոր իրավաբան Չեզարե Բեկկարիան, իր «Հանցագործությունների և պատժի մասին» [5] աշխատությունում քննարկելով պատժի երևույթը, կարևորում է մարդու իրավունքների պաշտպանության և այդ իրավունքների սահմանափակման «հոգեբանական» խնդիրը: Նա նշում է, որ պատժի կիրառումն իրենից չպետք է ներկայացնի տառապանք, դաժան վերաբերմունք հանցագործի նկատմամբ, այլ պետք է ուղղված լինի նոր հանցագործությունների կանխարգելմանը: Այդ իսկ պատճառով պետք է կիրառել պատժի այնպիսի ձևեր, որոնք, համապատասխանելով հանցագործությանը, հանցագործին չպատճառեն ֆիզիկական տառապանք, անարգանք՝ հոգեկանում թողնելով անդառնալի հետքեր:

Ռուս իրավաբան Ս. Պոզնիշևի ուսումնասիրություններն ուղղված են քրեագիտության, իրավաբանական հոգեբանության, ուղղիչ իրավունքի ոլորտներում հանցավորության, հանցագործի անձի, հանցագործների տիպաբանության պարզաբանմանը: Համաձայն հեղինակի տեսության, հանցագործությունն ունի երկու հիմք. առաջինը հանցագործ անձի հատկություններն են, երկրորդը՝ արտաքին հանգամանքները: Այն տարրերը, որոնցով պայմանավորված է հանցագործության անձնային հիմքերը, Պոզնիշևն անվանեց ներծին (էնդոգեն), իսկ անձին հանցագործության դրդող տարրերը՝ արտածին (էկզոգեն) [16, էջ 5]:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ուսումնասիրության համար կարևոր է ուշադրություն դարձնել դատապարտյալի կատարած արարքի բնույթին ու վտանգավորության աստիճանին, ըստ որի հանցարարքները դասակարգվում են ոչ մեծ, միջին, ծանր և առանձնապես ծանր տիպերի [3]:

Դատապարտյալի անձի մասին դեռևս Ֆյոդոր Դոստոևսկին, ով հրաշալի կերպով էր դատում մարդու հոգեվիճակների ու ապրումների մասին, (հոգեբաններ Զ. Ֆրոյդն ու Վ. Ֆրանկլը նշում են, որ ժամանակին մեծապես ազդվել են ռուս մեծ մտածողի գործերից), իր՝ <<Նամակներ մեռյալ տնից>> գրքում գրում է, որ բանտային կյանքը, ռեժիմը բազմաթիվ սահմանափակումներից բացի ենթադրում է նաև հարկադիր համակեցություն, որը, թերևս տանջանքներից մեծագույնն է, քանզի անազատության պայմաններում են հայտնվում այնպիսի անձինք, որոնց հետ քչերը կցանկանային գոյակցել ազատության պայմաններում [7]:

Ռուս ականավոր իրավաբանական հոգեբանության ներկայացուցիչներից Վ.Ն. Կուդրյավցևը նշում է, որ հանցագործությունը ոչ

միայն հասարակայնորեն վտանգավոր, անօրինական գործողություն կամ արարք է, այլ ավելի լայն հասկացություն է, որն ընդգրկում է դրա ակունքները, դրդապատճառների առաջացումը, նպատակադրումը, միջոցների ընտրությունը, սուբեկտի կողմից հանցագործության տարբեր որոշումների ընդունումը և այլն [11]: Այդուհանդերձ, հանցավորությունը պետք է դիտել ոչ միայն որպես գործողություն, քանի որ այն կապի մեջ է գտնվում ինչպես արտաքին գործոնների հետ, այնպես էլ այն ներհոգեկան գործընթացների ու վիճակների, որոնք պայմանավորում են արարքի կատարումը՝ տալով որոշակի ուղղվածություն:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ հանցագործությունը հասարակայնորեն վտանգավոր արարք է, որը ոտնձգություն է օրենքի և իրավունքի, հասարակարգի և իրավակարգի, անհատական և հասարակական-պետական սեփականության, մարդկանց կյանքի, իրավունքների ու ազատությունների նկատմամբ, որի համար այն կատարող սուբեկտը հետապնդվում, դատապարտվում և քրեական պատիժ է կրում: Կատարած հանցավորության համար դատարանը՝ հիմք ընդունելով ամբաստանյալի մեղավորության փաստերը, դատավճռի արդյունքում կայացնում է դատապարտելու և քրեական պատիժ նշանակելու որոշումը: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ հենց դատարանի դահլիճում դատավճռի հրապարակումով՝ դատապարտյալի համար այլևս սկսվում է կյանքի նոր շրջան, որը լի է բազում դժվարություններով, խոչընդոտներով և հակասություններով: Դժվարությունները նախ և առաջ պայմանավորված են ազատազրկման ու քրեակատարողական հիմնարկի առանձնահատկություններով, որն իր կնիքն է թողնում դատապարտյալի հոգեկան աշխարհի վրա: Նախ կատարած հանցանքի վերաբերյալ մտքերը, ապա կարոտը, հույզերն ու զգացողությունները՝ չկարողանալով արտահայտել այլոց մոտ, դատապարտյալների մոտ մեծանում է նյարդային լարվածությունն ու դյուրագրգռվածությունը, որն էլ իր հերթին բարձրացնում է տագնապայնության մակարդակը: Դա է պատճառներից մեկը, որ դատապարտյալների մոտ հաճախ կարող են լինել անհանդուրժողականության, կոնֆլիկտային իրադրություններ, որոնց արդյունքը կարող է ունենալ ծանր հետևանքներ: Անընդհատ զսպվածությունը կարող է հանգեցնել պոռթկումների, որոնք կարող են պահպանվել ողջ կյանքի ընթացքում: Միօրինակ կյանքը՝ լինելով ձանձրալի, շատ անգամներ հանգեցնում է հուսահատության, անտարբերության, ինքնամփոփության, վարքային խանգարումների, ագրեսիվ դրսևորումների, աֆեկտիվ վիճակների: Սոցիալական մեկուսացումը, օրվա ռեժիմի կտրուկ փոփոխությունը, հաղորդակցվելու, աշխատելու, նախասիրություններով

զբաղվելու, սահմանափակումները խորացնում են դատապարտյալի ընկճվածությունը, որը հույսերի փլուզման, նպատակների կործանման, կիսատության զգացողության, ֆրուստրացիայի հետևանք է: Քրեագետ, քրեական հոգեբանության մասնագետ Յու. Անտոնյանը այս կապակցությամբ նշում է. «Մշտապես, քսանչորս ժամ շարունակ գտնվելով տվյալ անձանց շրջապատում, դատապարտյալն ասես դառնում է մերկ, զգալիորեն զրկվում է առանձնանալու, կենտրոնանալու, կատարածի ու սեփական մեղքերի, իր կյանքի ու նրա հեռանկարների, հարազատների և այլնի մասին խորհելու հնարավորությունից: Մինչդեռ դա հարկավոր է հատկապես հենց նրանց, ովքեր ոտնահարել են բարոյական և իրավական հիմնական արգելքները և որի համար պատիժ են կրում: Ստեղծվում է ամբոխի մեջ մենության ֆենոմենը, երբ շուրջը մշտապես մարդաշատ է, իսկ նրանք, ում հետ կարելի կլիներ խոսել, կիսվել, ում կարելի էր վստահել գրեթե չկան» [4, էջ 69-70]: Դատապարտյալները, հատկապես առաջին դատվածություն կրողները հաճախ կարող են կորցնել հավատը սեփական ուժերի նկատմամբ, ինչպես նաև ազատություն վերադառնալու հույսը: Նրանց բնորոշ է տևական էքզիստենցիալ ճգնաժամը, կյանքի իմաստների կորուստը:

Պետք է նշենք, որ դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրները պայմանավորված են ոչ միայն արարքի բնույթով ու վտանգավորության աստիճանով, այլև քրեակատարողական հիմնարկության պայմաններով, որում դատապարտյալը կրում է պատժաժամկետը: Դրանք համապատասխանաբար չորսն են՝ բաց, կիսաբաց, կիսափակ և փակ տիպի հիմնարկություններ: Թե՛ դատապարտյալի արարքի բնույթին ու վտանգավորության աստիճանը, և թե՛ քրեակատարողական հիմնարկության տիպը մեծապես ազդեցություն են ունենում դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ձևավորման գործում: Խոսքը վերաբերվում է դատապարտյալի ինչպես հանցարարքի դրդապատճառներին, վարքի յուրահատկություններին, այնպես էլ քրեակատարողական հիմնարկության այն պայմաններին, որոնք էական ազդեցություն են ունենում դատապարտյալի վարքի դինամիկայում:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրների ուսումնասիրության հիմքում առանձնացնում ենք՝

- Խնդիրների համակարգ, որոնք ունեն սոցիալական և կենսաբանական փոխպայմանավորվածություն. Դատապարտյալների հոգեբանական խնդիրների սոցիալական փոխպայմանավորվածության համատեքստում առանձնացնում ենք այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված են դատապարտյալների սոցիալական դերի

փոփոխություններով, սոցիալական նոր կարգավիճակով, անձի սոցիալական մեկուսացման պայմաններով, սոցիալ-հոգեբանական հարմարման խնդիրներով: Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների կենսաբանական փոխպայմանավորվածության համատեքստում առանձնացնում ենք հոգեմարմնական խանգարումները, պայմանավորված ինչպես հոգեբանական, այնպես էլ քրեակատարողական հիմնարկության պայմաններով (լուսավորություն, խոնավություն, ջերմություն, յուրահատուկ հոտը ինչպես միջավայրի, այնպես էլ սեփական մարմնի և այլն):

ü Խնդիրների համակարգ, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ փոխպայմանավորվածություն. Դատապարտյալների օբյեկտիվ խնդիրների համատեքստում առանձնացնում ենք այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված են կատարած արարքի նկատմամբ օբյեկտիվ վերաբերմունքով՝ արարքի ծանրության աստիճանով, դատավճռով, դատապարտյալների միջավայրի վերաբերմունքով (որը կարող է լինել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ): Ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապված խնդիրներ՝ ընտանիքի, հարազատների, աշխատավայրի և այլն: Հաճախ դատապարտյալների մոտ մի շարք հոգեբանական խնդիրներ պայմանավորված են լինում ընտանիքում ունեցած որոշակի խնդիրներով՝ ընտանիքի սոցիալական ապահովվածության, ընտանիքի անդամների առողջության, կորստի և մի շարք այլ հարցերի հետ: Սուբյեկտիվ խնդիրների համատեքստում առանձնացնում ենք արարքի նկատմամբ սեփական սուբյեկտիվ վերաբերմունքը, ինքնաքննադատությունը: Սուբյեկտիվ խնդիրների մեջ դիտարկում ենք սեփական ինքնավերաբերմունքով, ինքնագնահատականով, ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված հարցերը:

Նրանց մոտ մտածողության սահմանները խիստ նեղանում են՝ կենտրոնանալով տվյալ միջավայրի վրա: Միօրինակ կյանքը հանգեցնում է հուսահատության, անտարբերության, ինքնամփոփության, վարքային խանգարումների, ագրեսիվ դրսևորումների, աֆեկտիվ վիճակների: Սոցիալական մեկուսացումը, օրվա ռեժիմի կտրուկ փոփոխությունը, հաղորդակցվելու, աշխատելու, նախասիրություններով զբաղվելու սահմանափակումները խորացնում են դատապարտյալի ընկճված վիճակը, որը հույսերի փլուզման, նպատակների կործանման, կիսատության զգացողության, ֆրուստրացիայի հետևանք է: Դատապարտյալի մեջ առաջանում է հիասթափություն, արժանապատվության անկում, արժեքային համակարգի փոփոխություններ, ներանձնային կոնֆլիկտներ, ինքնանվերաբերմունքի փոփոխություններ: ՔԿՀ-ում գտնվելու նախնական

շրջանում առաջին անգամ դատապարտվածների ինքնագնահատականը ցածր է, ինքնավերաբերմունքն ունի բացասական հուզական երանգ: Խմբում որոշակի դերերի յուրացման և դիրքի հասնելու արդյունքում դատապարտյալի ինքնագնահատականն աստիճանաբար բարձրանում է, ձևավորվում է դրական ինքնավերաբերմունք [15]:

Դատապարտյալների կարևոր խնդիրներից է հարմարումն այն միջավայրում, որտեղ պետք է անցկացնեն պատժաժամկետը: Նշենք, որ հարմարումը կարևոր է հենց այն պարզ պատճառով, որ դատապարտյալը սկսած մի քանի ամսից մինչև տարիներ, տասնամյակներ, ստիպված է լինելու անցկացնել քրեակատարողական հիմնարկում: Դատապարտյալը մշտապես կանգնած է այն խնդրի առջև, թե ինչպես հարմարվել ոչ միայն արտաքին, այլ նաև իր ներքին միջավայրին: Անձի հարմարվողական ակտիվությունը չի սահմանափակվում միայն դեպի արտաքին միջավայրը: Նրա հարմարման օբյեկտ են հանդիսանում նաև անձի ներքին վիճակները՝ սեփական բնավորությունը, թերությունները և արժանիքները, սեփական ընտրությունները և որոշումները, վարքը և դրա հետևանքները: Դատապարտյալը փոխհարաբերության մեջ է գտնվում ոչ միայն տվյալ միկրոմիջավայրի, այլ նաև սեփական «Ես»-ի հետ: Նա սպասումներ, պահանջմունքներ ունի ոչ միայն այլ մարդկանցից, այլև սեփական «Ես»-ից: Դատապարտյալը նաև խնդիր ունի համապատասխանելու այդ պահանջներին՝ արդարեցնելու սպասումները սեփական անձի հանդեպ: Հարկ է նշել, որ այսպիսի սպասումների ակունքներն իրենց սկիզբն են առնում սեփական անձի նկատմամբ այլ մարդկանց վերաբերմունքից: Դատապարտյալի ինքնահարմարման տարերից են հանդիսանում սեփական անձի ընդունումը, ինքնավստահությունը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ չհարմարման տարերից են սեփական անձի չընդունումը, սեփական ուժերի հանդեպ անվստահությունը, ներանձնային կասկածանքները, մեղավորության զգացումը, խղճի խայթը: Հարմարման ժամանակ անձը փորձում է հարմարվել նաև իր արտաքին տեսքին և սեփական սենսոմոտոր հնարավորություններին, ինտելեկտուալ և հուզական առանձնահատկություններին, իր սոցիալական կարգավիճակին և վերջապես ինքն իրեն որպես մեկ ամբողջական անձի, որը ունի անհատական անկրկնելիություն և որոշակի արժեքային ուղվածություն: Հարմարման և ինքնահարմարման գործում կարևոր է սոցիալական և անձնային նույնականացումը: Դատապարտյալը բախվում է որոշակի դժվարությունների իր նույնականացման վերաբերյալ, որն էլ կարող է անձնային ճգնաժամների պատճառ դառնալ: Նման ճգնաժամ է հանդիսանում միկրոմիջավայրի և անհատական նույնականացման

փնտրտուքների շրջանը: Հարմարման դժվարություններ կարող են հանդիսանալ նաև դատապարտյալի հոգեկան իներտությունը, անձնային նեգատիվիզմը, կարծրատիպերը, ինքնամփոփությունը, չշփվելը, միջանձնային փոխհարաբերություններում կոնտակտ ստեղծելու դժվարությունները, ինչպես նաև պայմանավորված տարիքով՝ նվազում է նյարդային համակարգի պլաստիկությունը:

Վ.Ֆ. Պիրոժկովը [12] դատապարտյալների խնդիրների համատեքստում առանձնացնում է ֆոբիաները, հատկապես կլաուստրոֆոբիկ հակազդումը, որը դրսևորվում է փակ տարածքի, մասնավորապես քննչական մեկուսարանի կամ բանտախցի նկատմամբ: Գտնվելով խցում՝ դատապարտյալների մեջ դրսևորվում է շարժողական անհանգստություն: Հաջորդը ընկճված-տագնապային հակազդումն է, որի դեպքում գերակշռում է տրամադրության անկումը, ապագայի հանդեպ հոռետեսությունը: Նրանց հատուկ է դյուրագրգռվածությունը, անքնությունը, կարոտը, անհանգստությունը: Վ.Ֆ. Պիրոժկովը նշում է նաև ժխտողական-ընկճված հակազդումը, որի ժամանակ բնութագրական է սեփական անձը մեղավոր չճանաչելը, կատարածի համար չզղջալը, ազատազրկման փաստի նկատմամբ ներքին ժխտողականությունը և ժխտողական-հիստերիկ հակազդումը, որի դեպքում բնութագրական է ճնշված տրամադրությունը, ապատիան, անտարբերությունն ու ուղղվելու ձգտման բացակայությունը, ինչպես նաև եսակենտրոնությունը, հեղինակության ձգտումը:

Ե. Բուռուկինան և Տ. Չելնոկովան նշում են, որ բանտում դատապարտյալները հայտնվում են իրենց համար անսովոր իրավիճակում՝ սեփական ազատության, տեղաշարժման, ընտրության սահմանափակում, ինտիմ հարաբերությունների և շփման սահմանափակում, օրվա խիստ կանոնակարգ, որոշակի աստիճանակարգի առկայություն՝ պայմանավորված դատվածության քանակով, ՔԿՀ-ում զբաղեցրած դիրքով և հանցատեսակով [10]: Կցանկանայինք ավելացնել, որ դատապարտյալներին բնորոշ է նաև մտածողության սահմանափակումը: Մեր կողմից կատարված հետազոտությունների ընթացքում որոշ դատապարտյալներ նշում էին, որ պայմանավորված քրեակատարողական հիմնարկության մի շարք առանձնահատկություններով՝ նրանց մոտ մտածողության սահմանները խիստ նեղանում են՝ կենտրոնանալով տվյալ միջավայրի վրա [1]: Ցավոք, նրանց մտքերը, հետաքրքրությունները, ցանկություններն ու մոտիվները սկսվում և ավարտվում էին հիմնականում քրեակատարողական հիմնարկության սահմաններում: Միօրինակ կյանքը, լինելով ձանձրալի, հանգեցնում է հուսահատության, անտարբերության, ինքնամփոփության, վարքային խանգարումների, ագրեսիվ դրսևորումների, աֆեկտիվ

վիճակների: Սոցիալական մեկուսացումը, օրվա ռեժիմի կտրուկ փոփոխությունը, հաղորդակցվելու, աշխատելու, նախասիրություններով զբաղվելու սահմանափակումները խորացնում են դատապարտյալի ընկճված վիճակը, որը հույսերի փլուզման, նպատակների կործանման, կիսատության զգացողության, ֆրուստրացիայի հետևանք է: Դատապարտյալները (հատկապես առաջին դատվածություն կրողները) հաճախ կարող են կորցնել հավատը սեփական ուժերի նկատմամբ, ինչպես նաև՝ ազատություն վերադառնալու հույսը:

Մենք փորձում ենք դատապարտյալների հոգեբանական խնդիրները դիտարկել անձի հոգեբանական տարբեր մակարդակներում՝ անձի հոգեկան գործընթացների, վիճակների, հատկությունների, անձի կառույցների համատեքստում, քանի որ դատապարտյալների մոտ ի հայտ են գալիս օրինակ՝ հոգեկանի պերցեպտիվ և կոգնիտիվ ոլորտների մի շարք խնդիրներ, ինչը չի կարելի անտեսել: Հատկապես շեշտը դրվում է բնավորության շեշտվածություն, ընդունակությունների և ինտելեկտի, կամքի, գործունեության ոչ համարժեքություն, հույզերի և հուզական վիճակների դրսևորման և դրանց ընթացքի վրա:

Այսպիսով, առանձնացնում ենք դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների համակարգ, որոնք կարելի է դասակարգել հիմք ընդունելով դատապարտյալի անձի հոգեբանական, սոցիալական, կենսաբանական, սոցիալ-հոգեբանական բոլոր գործոնները: Դրանք են՝ տարիքը, սեռը, կրոնական, ազգային պատկանելիությունը, կատարած արարքի բնույթը ու վտանգավորության աստիճանը, հանցարարքի դրդապատճառները, դատվածության քանակը, քրեակատարողական հիմնարկության տիպը ու պայմանները, խնդիրների սոցիալական ու կենսաբանական փոխպայմանավորվածությունը, խնդիրների օբյեկտիվ ու սուբյեկտիվ փոխպայմանավորվածությունը, անձի՝ ինքնագիտակցության վերակառուցումները, կենսական արժեքների փոփոխությունը, կյանքի իմաստային ընկալումները, իմացական և պերցեպտիվ գործընթացների բնույթը, դրսևորումները, հոգեվիճակները, հուզական հակազդումները իրադրությանը, ինտելեկտը, ինտելեկտուալ գործողությունները, գործունեությունը, զբաղվածությունը, ստեղծարարությունը, վարքի յուրահատկությունները՝ կոնստրուկտիվ կամ դեստրուկտիվ ընթացքը:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրների դասակարգման վերոնշյալ մոդելը անհրաժեշտ է զարգացնել իրավաբանական հոգեբանության հետազոտություններում, ինչը հնարավորություն կստեղծի ամբողջացնելու քրեակատարողական համակարգի հոգեբանության բնագավառում դատապարտյալների հոգեբանական խնդիրների

համակարգը: Դատապարտյալների հոգեբանական խնդիրների ուսումնասիրությունը և մասնագիտական դասակարգումը հնարավորություն կստեղծի նաև ոլորտի հոգեբանների մասնագիտական գործունեության արդյունավետ կազմակերպման, մասնավորապես քրեակատարողական հիմնարկություններում հոգեբանական աշխատանքների համակարգվածության համար:

Գրականություն

1. Սարգսյան Լ.Կ. Ինքնավերաբերմունքի դերը դատապարտյալների հարմարման գործընթացում: Ատենախոսության սեղմագիր, հ.գ.թ., Եր: 2015. – 22 էջ:
2. Антонян Ю.М. Мотивация поведения осужденных: монография /Ю.М. Антонян, Е.Н. Колышницына. – М.: ЮНИТИДАНА: Закон и право, 2017. – 143 с.
3. Антонян Ю.М. Жестокость в нашей жизни - М.: Инфра-М, 1995. - 320 с.
4. Багдасарян Д.С. Теория государства и права. Ереван: 2002. – 273 с.
5. Беккариа Ч. «О преступлениях и наказаниях». Пер. проф. М.М. Исаева. Юридическое издательство НКЮ СССР. Москва: 1939. – 463 с.
6. Дмитриев, Ю.А. Пенитенциарная психология: учебник / Ю. А. Дмитриев, Б. Б. Казак - Ростов н/Д: Феникс, 2007. - 681 с.
7. Достоевский Ф.М. Записки из мертвого дома. Эксмо: - М.: 2005. – 512 с.
8. Каутский К. Томас Мор и его Утопия. Пер. с немецкого М.А. и А.Г. Генкель. Книгоизд. М.В. Пирожкова. Исторический отдель. 14. С-Петербург: 1905. – 320 с.
9. Ломброзо Ч., Преступный человек: [сб. исследований]: пер. с итал. / Чезаре Ломброзо. – М.: ЭКСМО,СПб.: Мидгард, 2005. – 877 с.
10. Материалы III международной научной студенческой конференции «Научный потенциал студенчества в XXI веке». Том 2. Ставрополь: ГТУ, 2009. - 144 с. /Бурукина Е. Челнокова Т. Социально-психологический портрет личности осужденного/.

11. Механизм преступного поведения / Антонян Ю.М., Барановский Н.А., Дагель П.С., Дубовик О.Л., и др.; Отв. ред.: Кудрявцев В.Н. - М.: Наука, 1981. - 248 с.
12. Пирожков В.Ф. Криминальная психология. – М.: "Ось-89", 2001. – 704 с.
13. Познышев С.В. Криминальная психология: Преступные типы. О психологическом исследовании личности как субьекта поведения вообще и об изучении личности преступника в частности. – М.: ИНФРА-М, 2007. – IX, 302 с.
14. Ресоциализация осужденных в условиях развития гражданского общества: сборник материалов Международной научно-практической конференции (11-12 декабрия 2014 г.). – Киров: ФКОУ ДПО Кировский ИПКР ФСИН России, 2014. – 275 с.
15. Саргсян Л.К. Роль самоотношения в процессе адаптации осужденных. Автореф. дис. канд. психол. наук. – Ереван. 2015. – 26 с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը: